ցիրն փութացան զօրք զկնի նորա՝ և պատեցին զգեօղն՝ յորում էր։ Եւ իբրև ոչ գտին, հուր արկին 'ի գեօղն։ Եւ նա՝ զի թագուցեալ էր 'ի մարագ յարդի, ոչ կարաց զերծանիլ, այլ անդէն այրեցաւ յօրինակ հանդերձեալ հրոյն՝ զոր ընդունելոց է դատաստանաւ ըստ չար գործոց իւրոց։ Սա հրաման եհան, զի և կարգաւորք եկեղեցւոյ բոլորեքեան ելցեն 'ի պատերազմ, որպէս զի այնու ջնջեսցէ զքահանայս յաշխարհէս և մի՛ մնասցեն։ Իսկ Վաղէնտինիանոս արիւն ործկալով մեռաւ՝ որպէս եղբայր իւր Յոբիանոս։

Գրատիանոս՝ որ թարգմանի՝ շնորհազարդ, ընդ Թէոդոսի սկսաւ յամի Տեառն ՅՂԲ. ինքնակալեալ ամս Զ։ Սա որդի էր Վաղէնտինիանոսի, բայց թիւրածնունդ և ոչ ուղիղ ամուսնութեամբ։ Յաւուրս սորա անհամար զօրք Ալանիացւոց գան 'ի վերայ նորա, և նա գնաց ընդ դէմ նոցա, և յանկարծակի 'ի նեղուց ճանապարհին

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան